Մանրություն.— Շարունակությունը մնացել է մեծ ժամատան որմնասյան տակին։ Բովանդակությունը նվիրատվական է. ոմն նվիրել է վանքին մի ավետարան (գուցե և այլ բաներ) և ստացել է ժամ, որի չկատարողը «նզովված է յԱյ»։

20. Ներքին ժամատան աե պատի հր կողմի որմնասյան վրա

Հ ՈԽԶ Մ 1197

Հրատարակված է՝ Ջալ 16, Ղրիմ 53, Վիմ 39

1 ՈԽԶ թվ.
2 Ես Գրիգոր վարդապետս, որդի
3 Տուտա, ետու յԱծածինս Ը գ-
4 իրգ, Բ վերացման խաչ մաս-
5 ամբ, Բ վառ ատլաս, ոսկէգիր
6 հարցնատետր, ինձ ժամո(ց) եւ
7 այլ արդիւնք։ Պարտին ինձ
8 եղբայրաժամ Գ քառ-
9 ասունք, եւ զսբ Գրի-
10 գորո տաւնն, որ յաղու-
11 հացն ամէն եկեղեցի-
12 քս, մինչ ի կատարած աշխ-
13 արհի։ Որ խափանէ, հայր
14 կամ եկեղեցպան, նզ-
15 ոված է յԱյ. ամէն։
16 Բ շրջառ այլ տվի։

Մանրություն.— 1. 16-րդ տողը թեև և հետո է ավելացրած, բայց նույն անձի ձեռքով է փորագրված։

2. Հարցնատետրը հավանաբար դպրոցական ձեռնարկ է հարց ու պատասխանով գրված։

3. 6-րդ տողում ինձ ժամո անհասկանալի է, ուստի ժամոց դարձրինք (եկեղեցուն արված նվեր)։ Ինձ ժամոց — իմ հիշատակին տրված ժամոց։

4. 14-րդ տողում եկեղեցպան-ը տարբերում է վանահորից, հավանաբար լուսարարապետն է այդպես կոչվել։

Տարբերություն.— 1. Ջալ 5-րդ տողի ոսկեգիր-ը վերագրել է վառ ատլասին և ոչ թե հարցնատետրին, որի գիր ունենալն անկասկած է։

2. 8-րդ տողի եղբայրաժամ, որ սովորական է նույն վանքի միաբանին տրվող ժամերի համար, Ջալ և Ղրիմ կարդացել են եղբայրք ա ժամ։

3. 14—15-րդ տողերի նզովված է յԱյ ի փոխարեն Ջալ հեղինակել է եղիցի ինձ պարտաւոր։

21. Ներքին ժամատան հր պատին ներսից, ցածրուս

Հ ՉՀԵ Մ 1326

Հրատարակված է՝ Ջալ 17, Վիմ 157—158